ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

«Տեղեկագիր» № 7 (12), Երևան, 1941 թ.

Էդ. Թոփչյան

ՖԱՇԻԶՄԻ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՃԱՄԲԱՐՆԵՐՈՒՄ

Ֆաշիստական մարդակերների տիրապետությունը Գերմանիայում սկըսվեց մարդկային պատմության մեջ չտեսնված արյունահեղ ողբերգությամբ։ Հիտլերի խելագարությունից ավերված ուղեղում ստեղծված գազանային ծրագրերը իրականացվեցին հրեշավոր հետևողականությամբ։ Գողերը, մարդասպանները, պոռնկաբույծները, մորֆինիստները վարձկան լանդսկնեխտի գլխավորությամբ հարձակվեցին բանվորական թաղերի, համալսարանների, գիտության և արվեստի հիմարկների վրա։ Մարդկության և կուլտուրայի այդ ահավոր թշնամիները հոշոտեցին անպաշտպան մարդկանց, այրեցին և ոչնչացրին հաղարամյակների կուլտուրական արժեքները։ Ներքինացվեց գերմանական ժողովրդի ստեղծագործ միտքը, ավելի քանի երեք հաղարամյակ հետ շպրտվեց խավարի և բարբարոսության գիրկը։ Մարդկությանն անմահ մտածողներ տվող Գերմանիայի վրա իջավ սև գիշեր. գերմանական ժողովրդի լավագույն զավակների իդեալները մարդկանց հավասարության, մարդկային անհատի անսահման իրավունքների մասին՝ փոխարինվեց ստրկության և ոճրագործության ռասայական քարոզով։ «Թող մեզ կոչեն վայրենիներ, մենք կուլտուրա չենք ուզում»,— ոռնում է ֆաշիզմի «փիլիսոփա» Էրնստ Կրիկը։ Ֆաշիստ մարդակերները մարդկային բանականությունը հայտարարեցին անհամատեղելի «բարձր ռասայի» գաղափարին։ «Ինչքան լավ կլիներ ազատվել բանականության տիրապետությունից»,— ասում է ֆաշիստական Գերմանիայի «լուսավորության» մինիստրը՝ Էրազմի նշանավոր հերոսուհու Ցիմարության այլասերված որդին։ Միանգամայն հասկանալի է ֆաշիստական բանդիտների ատելությունը բանականության նկատմամբ. նրանք ցանկանում են խեղդել ժողովրդական մասսաների գիտակցությունը, մարդկանց դարձնել միայն բանող անասուններ։ Ֆաշիստական արյունռուշտ ավանտյուրիստները Հեգելի, Գյոթեի և Հայնեի հայրենիքը վերածեցին բանտերի ու համակենտրոնացման ճամբարների, դարչնագույն ժանտախտը տարածվեց ամբողջ երկրում. գերմանական ժողովրդի լավագույն զավակները՝ բանվորները, գիտնականները, արվեստագետները բանտարկվեցին ու աննկարագրելի տանջանքների ենթարկվեցին և այժմ էլ ենթարկվում են բանտերում ու համակենտրոնացման ճամբարներում, որոնք ֆաշիստական ռեժիմի օրգանական մասն են։ Բռնության վրա հիմնված ֆաշիզմի տիրապետությունը չի կարող գոյություն ունենալ առանց կացնի, դահճի և համակենտրոնացման ճամբարի։ Ֆաշիզմի հրեշավոր ոճրագործությունների, տեռորի և արյունհեղության մասին են պատմում ֆաշիստական ճամբարներում խոշտանգված Վիլլի Բրեդելը՝ «Փորձություն», Վոլֆգանգ

Լանգհոֆը՝ «Ճահճի զինվորներ», Կարլ Բիլլինգերը՝ «Բանտարկյալ № 880», Վալտեր Հորնունգը՝ «Դախաու», Կլաուս Հինրիխսը՝ «Երրորդ իմպերիայում» վեպերում։ Ընդգծած նկարագրվող սարսափներին, ցնցող տեռորի այդ տարեգրությունները հագեցված են խորը օպտիմիզմով և ապագա հաղթանակի հավատով։ Այդ գործերի մեջ լավագույնների թվին է պատկանում կոմունիստ գրող, ռևոլյուցիոն մարտիկ Վիլլի Բրեդելի «Փորձություն» վեպը, որի մեջ հեղինակը մերկացնում է ֆաշիստ մարդակերների իսկական դեմքը։ Վեպի առաջաբանում Բրեդելը գրում է. «1933 թվի մարտի 1-ին ինձ ձերբակալեցին։ Դրա նախորդ օրը սոցիալ-դեմոկրատների նախընտրական մի ժողովում ես խոսել էի հակաֆաշիստական միասնական ճակատի մասին։ 13 ամիս ես բանտարկված էի, որից 11 ամիս խիստ մեկուսացված։ Այս վեպում ես նկարագրել եմ այն, ինչ ինքս անձամբ ապրել եմ ու տեսել... Անգամ մեկուսացրած բանտարկության ընթացքում ես ստանում էի փոքրիկ տոմսեր, որոնք տեղեկություններ էին պարունակում մյուս բանտարկյալների ճակատագրի մասին։ Հարևան խցում նստած էր մի ընկեր, որի հետ պատերազմի և ռևոլյուցիայի ժամանակ Համբուրգի բանվորական երիտասարդական միության մեջ միասին աշխատել էինք։ Երբ բազմաթիվ խոշտանգումներից հետո ինձ նորից գանակոծեցին, նա պատը ծեծելով հասկացրեց ինձ, որ ամեն գնով դիմանամ, որպեսզի հետագայում նկարագրեմ, թե ֆաշիստներն ինչպես են վարվում անպաշտպան բանվորների հետ։ Դրանից մի քանի օր հետո այդ ընկերը, մշտական խոշտանգումներից ազատվելու համար, կախեց իրեն...»։

Համակենտրոնացման ճամբարներում իշխում են գրոհայինների վայրենի կամայականությունները։ Հիտլերական ավազակային բանդայի այդ վարձկան սրիկաների մասին մոտավոր պատկերացում է տալիս հետևյալ հաղորդագրությունը՝ տպագրված «Պոպուլլեր» թերթի 1933 թվի հուլիսի 19-ի համարում. «Օրերս Հիտլերն ընդունեց Հարավային Սաքսոնիայի հին գրոհայինների պատգամավորությանը։ Այդ պատգամավորությունը կազմված է այն մարդկանցից, որոնց անցյալի մասին հայտնի են հետևյալ տեղեկությունները. Գեորգ Ռիտտեր—ջոկատի պետ, վեց տարի բանտարկված, դրամանենգ, փականք ջարդող գող։ Բիլ Մուսման—ջոկատի պետ, երեք տարի բանտարկված՝ ստորագրություններ կեղծելու համար, փականք ջարդող։ Վիլլի Մել—տաս տարի բանտարկված՝ սպանության և կանայք վաճառելու համար։ Կարլ Մյուլլեր—սուտենյոր, գող, փականք ջարդող, հինգ տարի բանտարկված։ Ռեյնոլդ Ռալբե—յոթ տարի բանտարկված՝ գողության համար սուտենյոր։ Գեորգ Ռեզե—երկու տարի բանտարկված՝ գողության համար։ Պապստ—չորս տարի բանտարկված՝ կողոպտելու և ստորագրություններ կեղծելու համար։ Այս բոլոր տեղեկությունները հաղորդել է Սաքսոնիայի գրոհային ջոկատների հին անդամներից մեկը...» («Կոմսոմոլսկայա պրավդա»-ից)։

Քրեական կեղտոտ անցյալ ունեցող մարդակեր գազանների այդ բանդան համակենտրոնացման ճամբարներում ծեծում, ջարդում, տրորում և սպանում է հարյուր հազարավոր բանտարկյալների։

«Փորձություն» վեպում նկարագրվող դեպքերը տեղի են ունենում 1933—34 թվականներին։ Գործողությունը զարգանում է հետևյալ կերպ։ Համբուրգցի մանր առևտրական հրեա Միղիքեն նավի վրա զրուցում է մի

օտարականի հետ, հաճույքով պատմում նրան Համբուրգի գեղեցկությունների մասին։ Անծանոթը, որ կոչվում է Հենրիխ Տորստեն, կոմունիստ է, ընդհատակյա աշխատող, նա գալիս է Բեռլինից՝ Համբուրգի անլեգալ կազմակերպության մեջ աշխատելու։ Տորստենը և Համբուրգի պարտիական կազմակերպության ներկայացուցիչ Տեցլինը հանդիպման հենց առաջին պահին բանտարկվում են։ Եվ որովհետև լրտեսները Միզիքենին տեսել էին Տորստենի հետ զրուցելիս, բանտարկում են նաև այդ առևտրականին, որը ոչ մի առնչություն չի ունեցել քաղաքականության հետ։ Երեքն էլ բանտարկվում են Ֆյուլսբյուտելի համակենտրոնացման ճամբարում, և սկսվում են մարդկային լեզվով ոչ նկարագրելի նրանց տանջանքներն ու փորձությունները։ Մի շարք բանտարկյալներ չեն կարողանում տանել այդ դաժան հալածանքները, դիմում են ինքնասպանության։ Հրեշավոր հարցաքննության ժամանակ Տեցլինը հայտնում է պարտիական գաղտնիքները, հետո դիտակցելով կատարած սխալը, կախվում է իր կամերայում։ Սոցիալ-դեմոկրատական թերթի նախկին աշխատակից անհայտ պատճառներով բանտարկված հրեա Կոլովիցին գաղանային անտիսեմիտիզմով կուրացած գրոհայիններից հարկադրում են կախվելու։ Կոմունիստ Տորստենին չեն ընկճում ամենօրյա մերձիմահ ծեծն ու խոշտանգումները։ Ապագա հաղթանակի անխախտ հավատով Տորստենն անցնում է ֆաշիստական դժոխքի բոլոր շրջաններից և համակենտրոնացման ճամբարից ազատվելուց հետո ավելի մեծ եռանդով շարունակում է իր ռևոլյուցիոն գործունեությունը։

«Ճանճի զինվորներ» վիպակի հեղինակ երիտասարդ արտիստ Վոլֆգանգ Լանգհոֆը ռայխստագի հրկիզման հաջորդ օրը բանտարկվում է տասնյակ հաղարավոր այլ գերմանացիների հետ։ Նրանց շուտով փոխադրում են Գերմանիայի ամենասոսկալի համակենտրոնացման ճամբարներից մեկը՝ Լիխտենբուրգ։ Չնայած միանգամայն անմեղ լինելուն, Լանգհոֆն ազատվում է միայն մի տարուց հետո՝ քայքայված, ուժասպառ, բայց ֆաշիզմի դեմ մինչև վերջ պայքարելու անհուն գիտակցությամբ։ «Ճանճի զինվորներ» գրքում հեղինակը պատմում է գերմանական համարձակ բանվորների, գերմանական կոմունիստական պարտիայի հերոսական աշխատանքի մասին, որը շարունակվում է, անգամ համակենտրոնացման ճամբարի պայմաններում։ Լանգհոֆը նկարագրում է ոչ միայն ծեծը և սովամահությունը, այլև մարդկանց ֆիզիկապես ոչնչացնող անիմաստ «աշխատանքը»։ Դիշերը ծեծի և տանջանքների ենթարկվելուց հետո Լանգհոֆը մտածում է. «Արդյոք ես գոյություն ունեմ որպես մարդ, այս բոլորից հետո ես կարող եմ ինձ մարդ համարել»... Ընկերների ոգեշնչող տոկունությունը և եղբայրական օգնությունը վերականգնում են Լանգհոֆի հավատը մարդու անսահման կարողությունների նկատմամբ. նա հանգում է այն եզրակացության, որ մարդկային արժանապատվությունը, հերոսությունը և տոկունությունն անմահ են։ Այդ լավագույն հատկանիշներ կրողները կոմունիստներն են, որոնց չի կարողանում ընկճել անգամ ֆաշիստ մարդակերների ռեժիմը։

Ֆաշիստական Գերմանիայի ամենախոշոր համակենտրոնացման ճամբարի՝ Դախաուի մասին է պատմում Վալտեր Հորնունգը։ Հորնունգի գիրքը ընթերցողի մեջ առաջացնում է ցասում և արդահատանք գերմանական ժողովրդի դահիճների հանդեպ։ Հորնունգը սոցիալ-դեմոկրատ է, նա տեսնում է գերմանական ժողովրդին մարդասպանների և դահիճների կրունկի տակ,

նա խորապես գիտակցում է, որ գրանում հանցավոր է նաև այն պարտիան, որին պատկանում է ինքը։ Սակայն մտածելով Գերմանիայի ապագայի մասին, Հորնունգը սարսափում է պրոլետարական դիկտատուրայի գաղափարից։ Նրա այդ հայացքն արտահայտվել է նաև այս գրքում։ Դախաուում ամենից սոսկալին ոչ թե քայքայող աշխատանքն է, այլ այն խոշտանգումներն ու ստորացումները, որոնց ենթարկվում են բանտարկյալները։ Հորնունգը նկարագրում է, թե ինչպես գրոհայինները մեծ բարձրությունից թռչում են բանտարկյալ հրեա իրավաբան Շտրաուսի վրա այնքան ժամանակ, մինչև նա վախճանվում է։ Հրեա Շլոշին կաստրացիայի են ենթարկում և ծեծելով մեռցնում։ Երկու դիակների վրա էլ բենզին են լցնում և այրում։ Էջ առ էջ բացվում է ֆաշիստական ռեժիմի մարդատյաց կոշմարը։ Հիտլերյան սադիստները ոչնչացնում են բոլոր նրանց, ովքեր մտածում են աղնվորեն, ովքեր գերմանական ժողովրդի բախտը չեն անջատում առաջավոր մարդկության բախտից։

Հորնունգը հիացմունքով նկարագրում է կոմունիստների հերոսական կերպարները։ Միայն խորը հավատը և նվիրվածությունը բանվոր դասակարգի գործին կարող էր անխախտ պահել Ցեյների նման կոմունիստների պողպատե բնավորությունը։ Յոթ ամիս կարցերում վայրենի տանջանքների ենթարկվելուց հետո, Ցեյները դահիճներին ասում է. «Գերմանիան կարող է նորից բարձրանալ միայն որպես կոմունիստական հասարակություն»։ Կոմունիստները Դախաուի մյուս բանտարկյալներից տարբերվում են ոչ միայն անվեհերությամբ, կամքի ուժով, խորը հավատով ապագա հաղթանակի նկատմամբ, նրանք ոչ միայն համառ աշխատանք են տանում համախմբելու բանտարկյալների տարբեր խմբերը, այլև փորձում են իրենց գոյության դժվարին պայմաններից վերցնել այն, ինչը պետք կգա ապագայի համար։ Ծեծը և հալածանքը կոմունիստներն ընկալում են որպես վարժեցում ֆաշիզմի դեմ մղվելիք ապագա մարտերի։ Հորնունգը ճշտորեն նկարագրում է, որ ոչ միայն ճամբարում բանտարկվածներն են իրենց սեփական փորձով ըմբռնել ֆաշիզմի անհամատեղելի լինելը մարդկային նորմալ գոյությանը, այլ և գերմանական ողջ ժողովուրդը գնում է հակաֆաշիստական պայքարի կազմակերպիչ և ոգեշնչող կոմունիստական պարտիայի հետ։

«Դախաուն» սկսվում է հետևյալ բնաբանով. «Երանի այն մարդուն, որի սիրտը հրճվում և ամրանում է ծաղկող հայրենիքի տեսքից։ Երբ ինձ հիշեցնում են իմ հայրենիքի մասին, ինձ թվում է, թե ես ընկել եմ ճահճի մեջ, որ ինձ վրա իջել է դագաղի ծածկոցը»... (Ֆ. Հելդերլին)։ Հիտլերյան բարբարոսները ձգտում են սարկության ճահճի մեջ խեղդել գերմանական աշխատավոր մարդկության ազատասիրական ոգին, դագաղի վերածել ամբողջ աշխարհը, այդ չի լինի։ Սովետական հզոր ժողովրդի հայրենասիրական մեծ պատերազմը հողմացրիվ կանի մարդկության անարդ ոճրագործներին։

Կլաուս Հինրիխսը «Երրորդ իմպերիայում» գրքի ծանոթագրության մեջ հայտնում է. «Այս գրքում նկարագրված դեպքերը, հիմարկները, մարդիկ հեղինակային ֆանտազիայի արդյունք չեն։ Ճշմարտացի արտացոլված են այն դեպքերը, վիճակները և հանգամանքները, որոնք ապրել է ինքը՝ հեղինակը և որոնց մասին նա իմացավ ֆաշիստական Գերմանիայում»։

Ժամանակակից Գերմանիայում տիրող արյունահեղության և սա-

դիզմի ֆոնի վրա Հինրիխսն առանձնացնում է երկու ուժ—տեռորի կամայականության, քաղաքական և ռասայական մոլեգնության վրա հիմնված ֆաշիզմը և վերջինիս հակադրվող, սակայն Գերմանիայում դեռևս ճնշված հզոր ուժը, որին պատկանում է ապագան՝ կոմունիզմը։ Հինրիխսը նկարագրում է հետաքրքրական մի էպիզոդ։ Ճամբարի պետը կոմունիստներին երեք օրով զրկում է «սննդից» նրա համար, որ անհայտ «չարագործները» կտրել են Հինդենբուրգի պատվին նացիոնալ-սոցիալիստների տնկած ծառերը։ Այն հարցին, թե ովքեր են համակրում կոմունիզմը, բանտարկյալների $^{9}/_{10}$ մասը գնում է կոմունիստների հետ, հրաժարվում սննդից. մնում են քրեական հանցագործները և մի քանի սոցիալ-դեմոկրատներ։ Կոմունիստները բանտարկյալների առաջին շարքերումն են, իրենց խիզախությամբ և տոկունությամբ նրանք հարգանք են առաջացնում անդամ մարդակերների մեջ։

Գրոհայինների գազազած բանդայի առաջ բանվոր կոմունիստ Տոբիաս Ռելին պահնորդային ջոկատի պետ Ֆաուստը հարցնում է. «Իսկ ի՞նչպես կվարվեիք դուք (կոմունիստներդ) մեզ հետ, եթե հաղթեիք»։ Ռելը հպարտ պատասխանում է. «Շատ բան կախված է այն հանգամանքներից, որոնց մեջ պետք է տեղի ունենար հաղթանակը։ Սակայն մի բան անկասկած է՝ մենք կամաչեինք խոշտանգել անպաշտպան գերիներին»։ Այս պատասխանին հաջորդում է մերձիմահ ծեծը։ Ռելը ֆիզիկապես ջարդված է, սակայն հոգեպես, ինչպես միշտ, նա ավելի ուժեղ է իր հակառակորդներից։

— «Ելքդ գլուխդ հավաքիր, Ռել,—շարունակում է Ֆաուստը,—ասա մեզ, ինչո՞ւ համար ես դու այստեղ։

— Նրա համար, որ ես կոմունիստական պարտիայի անդամ եմ։

— Դու առաջ ես եղել կոմունիստական պարտիայի անդամ, Ռել... Իսկ այժմ, լավ մտածիր՝ ինչի մասին եմ ես հարցնում։ Ռել, դու այժմ է՞լ կոմունիստ ես...

Տոբիասը հանգիստ օրորվում է մի կողմից մյուսը, նրա վերքերով պատած կաշին ուռել և այրվում է, կարծես թե նա կախված է հսկայական խարույկի վրա։ Նրանք ցանկանում են մերձիմահ տանջել։ Արդյոք պետք է նա պատասխանի այս պրովոկատորին, թե ինչ է մտածում, ինչո՞ւ չասել «ոչ», արդյոք նա պարտավոր է անկեղծ լինել այս սրիկաների հետ։ Զէ՞ որ, չնայած այս բոլորին, նա մնում է այն, ինչ եղել է...

— Ճիշտ այդպես, ես այժմ է՛լ կոմունիստ եմ։

Ֆաուստը, կարծես, քարացավ. նայում է Տոբիասին։ Նա գնում է դեպի մարակը, որը տալիս է նրան Գեյերը, ձեռքը բարձրացնում է վեր, հետո իջեցնում դանդաղորեն և իր մարդկանց ասում է՝ «Նա խիզախություն ունի։ Այդ նրանից չի կարելի խլել, չունե»։

Տոբիաս Ռելի հերոսական կերպարն իր խորը մարդկային գծերով համակում է ընթերցողին։ Ընթերցողը մտածում է. անհաղթելի է այն պարտիան, որն ունի Տոբիասի նման խիզախ անդամներ։ Հինրիխսի լավագույն կերտվածքն է նաև կոմունիստ Մարտին Շնեհագենը՝ հռչակավոր գիտնական, գերմանական գրականության պատմաբան և լեզվաբան։ Չնայած որ նա «արիացի» է, սակայն ֆաշիստները նրան ատում են մտավոր մեծ կարողությունների, հոգեկան բարձր հատկությունների և ուռոյցիոն շարժմանը մասնակցելու համար։ Ֆաշիստները որոշել են Շնեհագենին ոչնչացնել.

նրան չի օգնում ոչ արտասահմանյան գիտական մտքի բողոքը, ոչ ընտանեկան կապերը և ոչ էլ բանտարկյալների հոգատարությունը։ Գրոհայինները գնդակահարելու սպառնալիքի տակ Մարտինին հարկադրում են գնալ արգելված ճանապարհով և նրան անմիջապես գնդակահարում են «փախուստի փորձ կատարելու» պատրվակով։

Վեպի լավագույն նկարագրություններն են բանտարկյալների մարդկային խորը փոխհարաբերություններին նվիրված էջերը, բանվոր Տորիասի և գիտնական Շնեհագենի մտերմությունը, նրանց օգնությունը մանր առևտրական հրեա Բիրմանին և քաղքենի, սահմանափակ, վաղեմի հումանիզմի պատրանքներով տառապող Վեստերլեին։

Գրքի վերջին գլուխը կրում է «Մենե տեկել» վերնագիրը։ Ավանդության համաձայն՝ այլասերման մեջ մխրճված Բաբելոնի վրա երևաց հսկայական մի ձեռք, որը գրեց՝ «մենե... տեկել... ֆարես» բառերը, որոնք նշանակում են հատուցման նախազուշակություն։ Բանվորական ամեն մի գործադուլ, ամեն մի մասսայական ելույթ ֆաշիզմին հիշեցնում է իր անկման մասին։ Էլեկտրոկայանի բանվորների գործադուլը համակենտրոնացման ճամբարը թողեց խավարի մեջ և շփոթության ենթարկեց գրոհայիններին— այդ հիշեցնում էր ճամբարի գաղաղած տերերին, որ, բացի բանտարկվածներից, Գերմանիայում կան բազմաթիվ բանվորներ, որոնց ձեռքին է երբոր դ իմպերիայի բախտը, որոնք կրարձրանան Սովետական հզոր ժողովրդի հետ մահացու հարված տալու ֆաշիստ մարդակերներին։